

Ջուրը կյանքի աղբյուրն է

Ջուրը ծածկում է Երկրի մակերևույթի 2/3-ը և կենսականորեն անհրաժեշտ է կյանքի բոլոր ձևերի համար: Երկիր մոլորակի ջրի 96,5%-ը պատկանում է օվկիանոսներին: Ջրի համաշխարհային պաշարների 97%-ն աղի ջուր է, 3%-ը՝ քաղցրահամ ջուր:



Վերջին 100 տարվա ընթացքում մոլորակի բնակչությունն ավելացել է 3 անգամ, քաղցրահամ ջրի սպառումը՝ 7 անգամ, ընդ որում՝ կենցաղային և խմելու կարիքների համար՝ 13 անգամ:

Քաղցրահամ ջրի պաշարները համարվում են վերականգնվող, բայց արդեն դասվում են սպառվող պաշարների շարքին, քանի որ գնալով ավելի շատ են աղտոտվում, մեծանում են դրանց օգտագործման ծավալները, թուլանում է վերականգնման հնարավորությունը:

Ջրի աղտոտման հիմնական աղբյուրներն են՝

- արդյունաբերական հոսքաջրերը, որոնք առավել հաճախ աղտոտված են նավթամթերքներով, ֆենոլներով, ծանր մետաղներով, բարդ քիմիական միացություններով, որոնք վատթարացնում են ջրի որակը, այն դարձնում խմելու և սննդում օգտագործման համար ոչ պիտանի,
- արդյունաբերական տաք հոսքաջրերը, որոնք խախտում են ջրավազանի ջերմային ռեժիմը, վատացնում են ձկների ձվադրության պայմանները, նպաստում են մի շարք օգտակար մանրէների ոչնչացմանն ու մակաբույծների զարգացմանը,
- կենցաղային կեղտաջրերը, որոնք հիմնականում պարունակում են աղիքային վարակիչ հիվանդությունների հարուցիչներ,
- անասնապահական գործունեության (գոմ, հավաբուն, արոտատեղի) արգասիքները,
- ձնհալի և անձրևների ժամանակ գյուղատնտեսական (հողահանդակներից) դաշտերից տեղափոխվող պարարտանյութերն ու թունաքիմիկատները,
- անձրևի և ձյան միջոցով մթնոլորտից անջատվող զանազան նյութերը,
- նավթատար խոշոր նավերի վթարների հետևանքով նավթի արտահոսքը:



Քաղցրահամ ջուրը՝ որպես սահմանափակ և խոցելի պաշար

Այսօր աշխարհում 9 մարդուց 1-ը խմելու ջրի պակաս է զգում:

Ըստ կանխատեսումների, մինչև 2050թ.-ը երկրագնդի ամեն չորրորդ բնակիչը կզգա քաղցրահամ ջրի պակաս:

Ջրային պաշարների արդյունավետ օգտագործումը և ջրամատակարարման ու ոռոգման համակարգերում կորուստների կանխումը Հայաստանի համար լուրջ հիմնախնդիրներից է: Արարատյան դաշտի արտեզյան ստորգետնյա ավազանի ինքնաշատրվանող հորերը, որոնք բազմաթիվ գյուղերի ջրի միակ աղբյուրն են, շատ նվազել ու ցամաքել են, քանի որ ցածրադիր մասում ձկնաբուծության համար փորված հորերը խլում են վերին հատվածի ջրհոր-շատրվանների ճնշումը:

Ինչպե՞ս խուսափել ջրով փոխանցվող հիվանդություններից

Աղտոտված ջրի միջոցով փոխանցվում են տարբեր վարակիչ հիվանդություններ, որոնցից հատկապես վտանգավոր են աղիքային հիվանդությունները (խոլերա, որովայնային տիֆ, պարատիֆեր, դիզենտերիա և այլն):

- Պահպանե՛ք անձնական հիգիենայի կանոնները:
- Խնամքով և հնարավորինս հաճախ օճառով լվացե՛ք ձեռքերը, հատկապես՝ ուտելուց առաջ և գուգարանից օգտվելուց հետո:
- Հետևե՛ք սննդի պատրաստման անվտանգության կանոններին:
- Մի՛ խմեք ջուր պատահական աղբյուրից:
- Քաղաքից դուրս մեկնելիս՝ ձեզ հետ վերցրե՛ք շշալցված ջուր:
- Խուսափե՛ք աղտոտված ջրամբարներում լողալուց, փոխարենը՝ լողացե՛ք միայն այդ նպատակի համար հատկացված վայրերում:
- Աղիքային հիվանդությունների բռնկումների ժամանակ, ջուրն օգտագործե՛ք միայն եռացնելուց հետո:

Ինչպե՞ս նվազեցնել ջրի կորուստները

- ✓ Մաշված ջրատար խողովակները ժամանակին փոխարինել նորերով
- ✓ Ոռոգման համար օգտագործել սարքավորումներ, որոնց միջոցով հնարավոր է ջուրը հավասարաչափ բաշխել բույսերի միջև
- ✓ Նախապատվությունը տալ կաթիլային ոռոգման եղանակին
- ✓ Ոռոգումն իրականացնել երեկոյան ժամերին, երբ խոնավության գոլորշիացումը նվազում է
- ✓ Արդյունաբերության մեջ արտադրական նպատակների համար ուղղակի ջրամատակարարման փոխարեն ներդնել շրջանառու և հաջորդական ջրամատակարարման համակարգ
- ✓ Ջուրն օգտագործել խնայողաբար՝ թե՛ արտադրության ոլորտում և թե՛ կենցաղում

Մի՛ աղտոտեք, խնայե՛ք ջուրը



Սույն տեղեկատվական նյութը ստեղծվել է «Հայ կանայք հանուն առողջության և առողջ շրջակա միջավայրի» ՀԿ-ի կողմից՝ ՄԱԿ-ի Ժողովրդավարության հիմնադրամի կողմից ֆինանսավորվող «Կանանց հնարավորությունների ընձեռում՝ Հայաստանում ջրային ռեսուրսների կայուն կառավարման գործընթացին մասնակցության համար» և տպագրվել է Global Water Challenge կազմակերպության և Coca-Cola Foundation-ի ֆինանսավորմամբ իրականացվող «Հայաստանի գյուղական բնակավայրերում ջրի կառավարման մարտահրավերների լուծման իրականացման նախաձեռնում» ծրագրերի շրջանակում:



«Հայ կանայք հանուն առողջության և առողջ շրջակա միջավայրի» ՀԿ
ՀՀ, 0019, Երևան, Բաղրամյան պող. 24բ
Հեռ.՝ (+374 10) 523604
Էլ. փոստ՝ office@awhhe.am
Վեբ կայք՝ <http://www.awhhe.am>